Ս. ԷՋՄԻԱԾԻՆԷՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՏԵՂԱԿԱԼ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

№
4 Նոյեմբեր 1939 ամի
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Նորին Ամենապատուութեան Պատրիարքին
Առաքելական Աթոռոյ Ս. Յակոբեանց
Յերուսաղէմ.

Ստացել եմ Ամենապատուութեանդ տարեոյս Յուլիս 25 թուակիր № 8791–30 պաշտօնական գրութիւնը, որով հաճել էիք հաղորդել Մեզ Ս. Աթոռոյդ Ընծայարանի ընթացարարս վեց սարկաւագների կուսակրօն քահանայ ձեռնադրուելու եւ աբեղայական կոչում ստանալու մասին:

Ստեղծուած պայմաններում Սաղիմայ վանքը միակ հաստատութիւնն է, որ Արմաշի դպրեվանքի փակումից յետոյ՝ ի վիճակի է ընծայելու գաղութահայ եկեղեցուն բարեկիրթ, մտաւորական եւ հաւատով լի հոգեւորականներ, ժողովրդին՝ հարազատ, ազգասէր ու հայրենասէր զաւակներ եւ հայ գրականութեան՝ բեղուն եւ գիտուն գրիչներ:

Մաղթում եմ կենսատու Փրկչին, որ շնորհէ Ձեզ առողջութիւն եւ արեւշատութիւն բեղմնաւոր գործունեութեանդ եւս առաւել յաջողութեան համար:

Մաղթում եմ Ամենաբարձրեալին, որ պարգեւէ Դպրոցիդ եւ Ընծայարանիդ ղեկավարներին կար եւ զօր պատւով եւ յաջողութեամբ տանելու իրենց վրայ դրուած դժուարին, բայց փաղցր լուծը:

Աղօթում եմ Փրկչին, որ իր հովանին եւ օրհնանքը Աջը տարածէ նորընծաների վրայ եւ օրհնէ նոցա, որ նոքա արժանաւոր սպասաւորներ լինին եկեղեցւոյ եւ դառնան անվեհեր ու անձնադիր հովիւներ իրենց հօտին: Այլ եւ ծաւալէ նոցա վերայ իր շնորհաբաշխ հոգին, որպէս զի բացուի նոցա մտքի առաքասը հանաչելու հնմարիտը, բարին ու գեղեցիկը եւ իրացնելու զայն կեանքի մէջ:

Թո՛ղ օրհնէ Տէրը նաեւ Սաղիմայ Միաբանութիւնը, որ օր աւուր աճի ու զօրանայ ի սպաս եւ ի մխիթարութիւն Ազգի եւ Եկեղեցւոյ:

Ցարգանաց եւ սիրոյ ողջունիւ՝
ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան
(ԿՆԻՔ
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴՈՅ)

№ 133
4 Նոյեմբեր 1939 ամի
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ս. Երուսաղէմի Ամենապատիւ Պատրիարք
Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս
Նշանեանին

Ամենապատիւ Սրբազան Եղբայր,

Տարեոյս Օգոստոս 16 թուակիր № 8904–27 գրութիւնը նոյնպէս ստացել եմ, սակայն բաւական ուշ՝ Էջմիածնից բացակայելուս հետեւանքով, որով պէտք է բացատրել նաեւ պատասխանի ուշացումը: Առ այժմ յիշեալ գրութեան առաջին մասին վերաբերեալ նոր ասելիք չ'ունիմ, քան այն որ հաղորդել է Ամերիկահայոց Նորընտիր Առաջնորդը մեր գրութեանց զօրութեամբ:

Բարենորոգչական ծրագրի նկատմամբ Ձեր հաղորդածները հանութեամբ կարդացի. մեծապէս շնորհակալ պիտի լինիմ, եթէ հանիք յիշեալ հարցի նկատմամբ հանգուցեալ Տ. Թորգոմ պատրիարքի «Սիոն»ի մէջ տպագրած ուսումնասիրութիւնը ուղարկել*:

Տարեոյս Յուլիսի 2-ին, չեմ յիշում № 108 գրութե՞ն հետ՝ թէ առանձին ծրարով ուղարկել էի նաեւ մի անձնական նամակ** իմ քարոզգրքերիս եւ երաժշտական աշխատանքներիս տպագրութեան վերաբերեալ, որոնց պատասխանը չ'ունեմ: Ենթադրելի է, որ նամակս Ձեր ձեռքը չէ հասել. տարակոյսիս լուսաբանութեան համար շնորհակալ պիտի լինեմ:

Ցարգանաց եւ սիրոյ ողջունիւ՝
ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան
(ԿՆԻՔ
ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴՈՅ)

---

* Ղրկուեցան ասենին:
** Սոյն նամակը չէ ստացուած:

digitised by A.R.A.R.@

№ 140
15 XI 1939 ամի
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ս. Երուսաղէմի Ամենապատիւ Պատրիարք
Դերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպս.
Նշանեանին

Ամենապատիւ Սրբազան Եղբայր,

Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոսի քաղցրոն առքիւ հեռագրով խնդրել էի, որ հաճիք Ամենայն Հայոց Հայրապետութեան Ներկայացուցիչը լինել, որի մասին հեռագրուել էր նաեւ Բէյրութ: Երուսաղէմից հեռագրական պատասխան ստացուեցաւ թէ՝ միայն անդրիներն եւ Ֆրանսիներն լեզուներով կարելի է հեռագրել: Արդէն հեռագիրն ուղարկել էր իմ Էջմիածնից պաշտօնական գործով բացակայելուս հետեւանքով, ուստի եւ հեռագրի երկրորդելը նպատակի չ'պիտի ծառայեր. բաւական համարուեցաւ հաղորդագրել մեր ասելիքներն ու ասելիքները՝ ուղարկելով նաեւ երկու հեռագիրները, որ կը գտնեք ծրարիս ծոցում:

Մաղթելով Ամենապատուութեան եւ Միաբանութեան անդամներին արեւշատութիւն եւ հոգու անդորրութիւն մնամ

Եղբայրական սիրոյ ողջունիւ՝
Ազգապակից ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան

ԾԱՆՕԹ.— Ներփակուած հեռագրի պարունակութիւնն է. — «Հաճեցէք լինել Մայր Աթոռի Ներկայացուցիչը Սահակ Կաթողիկոսի թաղմանը. հեռագրուած է».

ՏԵՂԱԿԱԼ
ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը պատասխանեց որ թէեւ հեռագիրը չէ ստացած ատենին, բայց առանց ատոր ալ ինքնաբերաբար կատարած եղաւ այդ պարտականութիւնը թէ՛ իբրեւ Ս. Էջմիածին ձեռնադրուած եպիսկոպոս, եւ այդու իսկ Միաբան Ս. Էջմիածնի, եւ թէ՛ իբրեւ երկու տարի անդ ապրած մէկը։

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԱՆՑ ԱԹՈՌԱԿԱՆ ՈՒԽՏԻՆ

Ի սկիզբն 1940 տարւոյս, մեր վանական ընտանիքի անդամներուն թիւն է 120. Պատրիարք և Եպիսկոպոս՝ 2, Վարդապետք և Աբեղայք՝ 43, (որոնցմէ 9 հոգին արտասահման՝ զանազան պաշտօններու վրայ, իսկ 6 հատը Պաղեստին՝ մեր թեմերու մէջ). Սարկաւագունք՝ 4, ժառանգաւորք՝ 34, Ուբարակիրք՝ 5, Աշխատաւոր Միաբանք՝ 17, Մայրապետք՝ 15։ Ասոնցմէ դուրս են Դիւանի Պաշտօնեայք՝ 6, Տպարանի աշխատաւորք՝ 6, զանազան այլ պաշտօնեայք՝ 8։

Ս. Աթոռս, ի Պաղեստին և յԱնդրյորդանան, իր իրաւասութեան սահմաններուն մէջ, կը հովանաւորէ և կը վարէ, բացի ժառանգաւորաց վարժարանէն և Ընծայարանէն, 4 Նախակրթարաններ իրենց Մանկապարտէզի բաժիններով, և 2 Ծաղկոցներ, ընդամէնը շուրջ 1150 աշակերտութեամբ, և 45 անձերէ բաղկացած ուսուցչական կազմով, բացի սոյն Նախակրթարաններու մէջ Տեսչի և դաստիարակի պաշտօն վարող Վարդապետ հայրերէ։

ԱՄԱՆՈՐ

Ըստ նախորդ տարիներու սովորութեան Ամանորի Նախօրեակի երեկոյին Միաբանութիւնը ամբողջ իր կազմով կ'ելլէ Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, յետ պատշաճ խորհրդածութեանց և շնորհաւորութեանց կը բաշխէ ամենքին Ս. Աթոռոյս աւանդական կաղանդչէքը — մէկական Օրացոյց —։ Նոյն երեկոյին ժառ. Վարժարանի մէջ կը սարքուի կաղանդի զուարթ երեկոյթ մը, որուն կը մասնակցէր նաև Ուսուցչական Մարմինը։

Առաւօտեան Ս. Պատարագէն անմիջապէս ետք, զոր կը մատուցանէ ժամօրհնող Տ. Գէորգ Վրդ., և ըստ պատշաճի աւուրն կը քարոզէ Տ. Արտաւազդ Աբքեպիսկոպոս։ Միաբանութիւնը կը բարձրանայ Պատրիարքարան։ Լուսազարդ Դահլիճը լի է խուռն բազմութեամբ, որ եկած է շնորհաւորել Ս. Պատրիարք Հայրը և Միաբանութիւնը, սկսող Նոր Տարւոյ սեմին։ Հոն է Միաբանութիւնը իր ամբողջ կազմով, որուն մէջ տեղ բռնած են նաև երկու հիւր դէմքեր, Հալէպի թեմին բարեջան առաջնորդը՝ Դեր. Տ. Արտաւազդ Աբքեպս. Սիւրմէեան և Նոր-Ջուղայի Ամենափրկչեան վանքի ղպրանոցի տեսուչ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Իսահակեան։ Հոն են ժառանգաւորաց ու Ս. Թարգմանչաց վարժարաններուն ծաները իրենց դաստիարակներով։

digitised by A.R.A.R.@